

Հարգելի պարոն Ավետիսյան

Ներկայացնում եմ 2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում իմ կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

Մասնակցել եմ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ընդունվող փաստաթղթերի մշակմանը՝ մասնավորապես բուսասանիտարիայի ոլորտի վերաբերյալ ներկայացրել եմ դիրքորոշումներ, հիմնավորումներ, առաջարկություններ, ինչպես նաև մասնակցել եմ բուսասանիտարիայի ոլորտին առնչվող բոլոր՝ 13 տեսակոնֆերանսներին, որպես լիազոր մարմնի ներկայացուցիչ ինչպես աշխատանքային խմբում, այնպես էլ ենթակոմիտեի կազմում: Ստացված նյութերը նախորոք մինչև տեսակոնֆերանսը սկսելը, վերլուծվել, քննարկվել են բուսասանիտարիայի տեսչության մասնագետների և ղեկավարության հետ: Ընթացիկ հարցերով մշտական կապի և քննարկումների մեջ եմ գտնվել բուսասանիտարիայի տեսչության ղեկավարության և աշխատակիցների հետ և ըստ անհրաժեշտության իրենց կողմից պատրաստվող գրությունների վերաբերյալ ներկայացրել եմ առաջարկություններ:

Ուսումնասիրել և վերլուծել եմ միջազգային կառույցների կողմից պատրաստված նախագծեր և ժամանակին ներկայացրել եմ առաջարկություններ դրանց վերաբերյալ:

Հիմնավորել եմ լիազոր մարմնի դիրքորոշումը միջազգային կառույցների կողմից բարձրացվող բուսասանիտարիայի ոլորտի հրատապ հարցերի վերաբերյալ:

Վերլուծել եմ բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիայի համապատասխան հանձնաժողովի կողմից պատրաստված և քննարկմանը ներկայացված բուսասանիտարական միջոցների միջազգային չափորոշիչների նախագծեր և պատրաստել եմ դրանց վերաբերյալ մեկնաբանություններ:

Մասնակցել եմ կազմակերպվող մի շարք աշխատաժողովների և սեմինարների:

Ի կատարումն ՀՀ փոխվարչապետի 2019 թվականի հունիսի 12-ի թիվ 04/03.13/27685-2019 հանձնարարականի ընդգրկվել եմ Վրաստանի տարածքով հացահատիկի, հացահատիկային կուլտուրաների, այլորի և կերային կուլտուրաների՝

ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների արգելման հարցի կարգավորմանն աջակցող աշխատանքային խմբում:

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի մայիսի 23-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու և ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի մայիսի 3-ի N 80-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 119-Ա հրամանի համաձայն ներառվել են աշխատանքային խմբում, որի համաձայն մշակման փուլում է գտնվում բուսասանիտարիայի ոլորտի զարգացման ազգային ծրագիրը, միջոցառումների ցանկը և ժամանակացույցը:

Բուսասանիտարիայի տեսչության և այլ շահագրգիռ ստորաբաժանումների հետ համատեղ բուսասանիտարիայի ոլորտի փաստաթղթաշրջանառության մասով մասնակցել են մի շարք քննարկումների, ներկայացրել են առաջարկություններ և դիտողություններ:

Իրականացրել են բուսասանիտարիայի գծով փոձագետի աշխատանքային ծրագրով ինձ վերապահված այլ գործառույթներ:

Փորձագետ



Մ. Թարգյան

28.06.2019թ.